# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.02.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ԱՄ-2019/10**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի.

Մասնակցությամբ՝ «Արգոհշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Ա. Ստեփանյանի (լիազորագիր, տրված 30.01.2019թ.)

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված 22.01.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված 22.01.2019թ.)

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներկայացուցիչներ՝

Ա. Ասատրյանի (լիազորագիր, տրված՝ 17.01.2019թ.)

Ա. Խաչատրյանի (լիազորագիր, տրված՝ 17.01.2019թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/394-19 գրությամբ «Արգոհշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 09.01.2019թ. թիվ 40/11-18 գրության հիման վրա, 16.01.2019թ. թիվ 26-3/394-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Արգոհշին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Արգոհշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Արգոհշին» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 30.01.2019թ. գրությամբ հայտնել է, որ 2018թ. մայիսի 24-ին «Արգոհշին» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Նշված պայմանագրով նախատեսվել է իրականացնել Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկի արտաքին և ներքին կոյուղագծերի վերանորոգման աշխատանքները:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Արգոհշին» ՍՊԸ-ի և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարիքների համար աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 3.1.4.-րդ կետի և 3.1.4 կետի «բ» ենթակետի ուժով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

2018թ մայիսի 24-ին «Արգոհշին» ՍՊԸ-ի և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության միջև ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագիրը՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից 28.12.2018թ. Ընկերությանը ուղղված գրությամբ միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 3.1.4.-րդ կետի և 3.1.4 կետի «բ»ենթակետի ուժով /որի մասին կապալառուին պետք է ծանուցվեր համաձայնագրային ժամկետի ավարտումից, անմիջապես հետո, թեկուզ կապալառուն նամակով խնդրել է, ելնելով իրադրության բարդ ու ոչ ադեկվատ իրավիճակից, չխզել պայմանագիրը, կատարել նախագծային փոփոխությունները և նշանակել ավարտման նոր խելամիտ ժամկետ:

Համաձայն Պայմանագրի 3.1.4.-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը /ներառյալ օրացուցային գրաֆիկը/:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2018թ. օգոստոսի 31-ը:

2018թ. օգոստոսի 31-ին «Արգոհշին» ՍՊԸ-ի և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության միջև կնքվեց թիվ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի Համաձայնագիր 1-ը, որի համաձայն Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվեց 30

օրացուցային օրով և սահմանվեց աշխատանքների կատարման նոր վերջնաժամկետ՝ 30.09.2018թ.:

Ընկերությունը աշխատանքների կատարման ողջ ընթացքում ձեռնարկել է բոլոր միջոցները՝ աշխատանքները պատշաճ և ժամանակին կատարելու համար: Սակայն աշխատանքների կատարման ընթացքում պարզվել է, որ առկա են բազմաթիվ անհամապատասխանություններ նախագծանախահաշվային փաստաթղթե-րում համեմատած իրական վիճակի հետ: Բնահողերը ուսումնասիրված ու հետազոտված չեն՝ ըստ շինարարական նորմերի, որի հետևանքով դեռևս ցանկապատից դուրս արտաքին կոյուղու խրամուղին քանդելու ժամանակ ի հայտ են եկել խրամուղին հատող բազմաթիվ մալուխագծեր և կոմմունիկացիաներ և նոր քանդված խրամուղիները անընդհատ լցվել են անհայտ ծագումով ջրերով, խոչընդոտելով աշխատանքների ժամանակին իրականացմանը:

Նախագծերի վրա նշումներ չկան գոյություն ունեցող կոյուղագծերի ու այլ կոմմունիկացիաների գոյության վերաբերյալ, որի հետևանքով դեռևս ցանկապատից դուրս արտաքին կոյուղու խրամուղին քանդելու ժամանակ ի հայտ են եկել խրամուղին հատող բազմաթիվ մալուխագծեր ու կոմմունիկացիաներ, քանդած խրամուղին անընդհատ լցվում ու ողողվում էր անհայտ ջրերի հոսքով՝ խոչընդոտելով ու երկարաձգելով աշխատանքների իրականացումը: Նույնը, մի քանի անգամ շատ ու հաճախ, ի հայտ է եկել բակում խրամուղիներ քանդելուց: Բացի այդ, խրամուղին նախագծային խորությամբ քանդելուց նաև բակային մասում, ընդերքային և կոյուղաջրեր ողողում են խրամուղիները և խոչընդոտում աշխատանքների իրականացմանը:

Նախագծանախահաշվային փաստաթղթերում մեծ անհրաժեշտություն էր առաջացել իրականացնել փոփոխություններ՝ նշահարումների, ավելորդ կոյուղահորերի, տվյալ հաստատությունում ոչ կիրառելի ու ոչ անհրաժեշտ էլեկտրոփականների /որոնց մակնիշն ու գները /40անգամ քիչ/ նախահաշվում և նախագծում սխալ են նշված/ և խցերի ներսում իրականացվող աշխատանքների վերաբերյալ, որոնք նախագծող կազմակերպությունը հրաժարվում էր իրականացնել:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձին Ընկերությունը տեղեկացել է, որ դեռևս սկսած 11.06.2018թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը ուղղված գրությամբ, և բազմաթիվ այլ գրություններով Ընկերությունը մասնագիտական ու իրավական հիմնավորումներով Ընկերությունը տեղեկացրել է, որ աշխատանքները սկսելուն զուգահեռ պարզ դարձավ, որ նախագծանախահաշվային փաստաթղթերում և գոյություն ունեցող իրավիճակների միջև կան բազմաթիվ անհամապատասխանություններ և խնդրել Պատվիրատուի հանձնարարությունը գոյություն ունեցող նախագծանախահաշ-վային փաստաթղթերում իրականացնել դրությանը համապատասխան փոոխություններ, բաց Ընկերության խնդրանքը ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ընդունվել է որպես բողոք և ոչ մի փոփոխություն չի իրականացվել նախագծանախահաշվային փաստաթղթերում (գրության պատճենները կցվում են):

Վերոհիշյալ իրավիճակը հանգեցրել է նրան, որ կոյուղու խողովակների ամեն մի հատված տեղադրվեց ու վերատեղադրվեց երեքից հինգ անգամ, որին տեղյակ են ՔԿՀ-ի և ՔԿՎ-ի համապատասխան աշխատակիցները, անհայտ ջրերի կողմից խրամուղիների պարբերաբար ողողման և լիցքային գրունտներ փլուզումների:

Վերոհիշյալը հավաստվում է այն փաստով, որ նախագծանախահաշվային փաստաթղթերին կցված է 06.07.2009թ. թվագրված «ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի զբաղեցրած տարածքում գրանցված վտանգավոր երկրաբանական երևույթների ուսումնասիրությունների» եզրակացությունը, որում նշված է, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի զբաղեցրած տարածքում անհրաժեշտ է իրականացնել երկրաբանական երևույթների ուսումնասիրություններ: Բացի այդ, առաջարկվել է «մասնագիտացված լիցենզավորված կազմակերպության միջոցով իրականացնել հորատումներ՝ տեղանքի հիդրոլոգիական իրավիճակի ճշգրտման, ջրային հորիզոնների բացահայտման և դրենաժային համակարգի ապահովման համար» /կցվում է եզրակացության պատճեն/:

Մինչդեռ, ինչպես նշվել է, նշված ուսումնասիրությունները չեն կատարվել, և նախագծա-նախահաշվային փաստաթղթերը նախապատրաստվել են՝ առանց համապատասխան ուսումնասիրություն կատարելը՝ հիմք ընդունելով 06.07.2009թ. իրականացված «ՀՀ ԱՆ

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի զբաղեցրած տարածքում գրանցված վտանգավոր երկրաբանական երևույթների ուսումնասիրությունների» եզրակացությունը:

Այսպիսով, նախագիծը չունի փորձագիտական եզրակացություն և իրականացված է 06.07.2009թ եզրակացության հիման վրա: Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ նախագծանախահաշվային փաստաթղթերը դրվել են մրցույթի՝ առանց տեղանքի հիդրոլոգիական իրավիճակի ուսումնասիրման, ինչպես այն առաջարկվում է փորձագիտական եզրակացությամբ: Փաստորեն, առանց վերջնական եզրակացության նախագիծը դրվել է մրցույթի, որի արդյունքում խնդիր է ստեղծվել շինարարական կազմակերպության համար ժամանակին կատարելու նշված աշխատանքները:

Նշված իրավիճակը շտկելու և աշխատանքները առավել արդյունավետ իրականացնելու նպատակով, ինչպես արդեն նշվել է, «Արգոհշին» ՍՊԸ-ն բազմաթիվ գրություններով դիմել է Պատվիրատուին՝ նշված բացթողումները շտկելու առաջարկով, սակայն այս ուղղությամբ Պատվիրատուի կողմից որևէ գործողություն չի ձեռնարկվել:

Ավելին, Պատվիրատուն նշված բազմաթիվ խնդիրներին լուծում չտալով և դրանով իսկ, ըստ էության, խոչընդոտելով «Արգոհշին» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրային պարտավորությունների ժամանակին և անխափան կատարմանը՝ արդյունքում 28.12.2018թ. Ընկերությանը ուղղված գրությամբ, առանց իրավական, միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ այն հիմքով, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված ժամկետը:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքը քննող անձին խնդրել է նկատի ունենալ, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների գրեթե 70% Ընկերության կողմից պատշաճորեն կատարվել են/, ըստ էության, կարելի է համարել համարյա լիովին ավարտված, քանի որ էլեկտրոփականների մասը երկկողմ համաձայնությամբ արդեն անհրաժեշտություն չկար իրականացնել, իսկ այդ մասի աշխատանքները ոչ անհրաժեշտ համարելու դեպքում, ներքին կոյողագծերի փոփոխության համար անհրաժեշտ էր, նախագծային ու նախահաշվային փոփոխություններ /թեկուզ նախահաշվային փոփոխությունները, փոփոխվող ծավալների համադրման ակտի ձևով, կապալառուի կողմից իրականացվել ու ողարկվել է ՔԿԾ-ին, բայց մնացել է անարձագանք/, հանձնվել Պատվիրատուին, ընդունվել վերջինիս կողմից, և վերոհիշյալի

դիմաց կատարվել են համապատասխան վճարումներ (հանձնման-ընդունման ակտերի պատճենները կցվում են): Ավելին, Պայմանագրով նախատեսված աշխատանքի պատշաճ կատարման մասին Հ1 հանրային հեռուստաընկերությամբ հեռարձակվել է համապատասխան հաղորդում (ձայնագրությունը ներկայացվում է), որի ընթացքում աշխատանքների պատշաճ և որակով կատարման ու ջրահեռացման համակարգի լիովին անխափան գործելու մասին հայտնել է ՀՀ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի մասնագետ շինարարը Ասատուր Ասատրյան և ՔԿԾ-ի տնտեսական գծով տեղակալ արդարադատության գնդապետ Վարուժան Մելքոնյանը:

Ավելին, Ընկերությունը Պատվիրատուին ուղղված 10.07.2018թ. թիվ ԱԳՇ-ՔՎՀ-05 գրությամբ խնդրել է եղանակային բարվոք պայմաններում (ամառային շոգը նվազելու դեպքում) հնարավորություն տալ աշխատանքները իրականացնել ժամը 08.00-ից մինչև 21:00, իսկ հանգստյան օրերին՝ 9.00-19.00-ին:

Վերոհիշյալը նույնպես վկայում է, որ «Արգոհշին» ՍՊԸ-ն ձեռնարկել է բոլոր միջոցները աշխատանքները առավել արդյունավետ իրականացնելու համար:

Ելնելով վերոհիշյալից՝ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել աշխատանքների ընթացքի իրողությունը, ներկայացված փաստերը, փաստական հանգամանքները և «Արգոհշին» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձ-նած որևէ պարտավորության խախտում, վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Արգոհշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/10 ընթացակարգի շրջանակներում 18.01.2019թ. ժամը 10:25-ին և 04.02.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 04.02.2019թ. ժամը 10:10-ի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

**3. <u>ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.01.2019թ. թիվ 40/11-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Արգոհշին» ՍՊԸ-ի միջև 24.05.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» պայմանագրի շրջանակներում «Արգոհշին» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները, որը հանգեցրել է Գնորդի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության, կողմից վերը նշված պայմանագրերը միակողմանի մասնակի լուծելը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/10 ընթացակարգի շրջանակներում 18.01.2019թ. ժամը 10:25-ին և 04.02.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ,, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

**<u>4. ՍՑ-ԱՄ-2019/10 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2019/10 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Արգոհշին» ՍՊԸ-ի միջև 24.05.2018թ. կնքվել է կապալային աշխատանքների կատարման «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագիրը, որով «Արգոհշին» ՍՊԸ-ն ստանձնել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացման պարտականությունը:

2. Ընկերությանն ուղղված 28.12.2018թ. թիվ 40/6-7309 գրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը հայտնել է, որ հիմք ընդունելով պայմանագրերի 3.1.4 կետը և 3.1.4 կետի «բ» ենթակետը Պատվիրատուն 2018թ. դեկտեմբերի 27-ից

միակողմանի մասնակի լուծում է «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագիրը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/394-19 գրությունը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 09.01.2019թ. թիվ 40/11-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից***

***պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Արգոհշին» ՍՊԸ-ի միջև 24.05.2018թ. կնքվել է կապալային աշխատանքների կատարման «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագիրը, որով «Արգոհշին» ՍՊԸ-ն ստանձնել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացման պարտականությունը:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Նույն կետի 1.2 կետով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև

պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 30.08.2018թ.:

Պատվիրատուին ուղղված 10.07.2018թ. թիվ ԱԳՇ-ՔԿՎ-04 գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման և նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լիարժեք ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ նախագծում ու նախահաշվում կան որոշակի ծավալների և աշխատանքների բացթողումներ, որոնք անհրաժեշտորեն ու անխուսափելի ենթակա են իրականացման:

Դրանք են՝ 1. Արտաքին կոյուղու ցանց բաժնում.

Բնահողերը ուսումնասիրված ու հետազոտված չեն ըստ՝ շինարարական նորմերի, որի հետևանքով դեռևս ցանկապատից դուրս արտաքին կոյուղու խրամուղին քանդելու ժամանակ ի հայտ եկան խրամուղին հատող բազմաթիվ մալուխագծեր ու կոմմունիկացիաներ, նույնն ի հայտ եկավ բակում խրամուղիներ քանդելուց: Բացի այդ խրամուղին նախագծային խորությամբ քանդելուց երևի կամ ընդերքային կամ ուրիշ կոյուղաջրեր ողողում են խրամուղին և խոչընդոտում աշխատանքների իրականամցանը: Նաև չի բնութագրված, թե ինչ մեթոդներով պետք է աշխատանքները տարվի անտանգության գոտիներում ու պարիսպների տակ:

Այս ամենի պատճառը, մինչ նախագիծ կատարելը, տարածքի ոչ լիարժեք ուսումնասիրության հետևանք է:

15-րդ կետում բետոնյա կոնստրուկցիաների և բետոնի ծավալները չեն համընկնող իրականացվող բետոնյա կոնստրուկցիաների ու բետոնի ծավալների հետ:

- 1 Կափարիչը 16 կետում արժե 66.67 հազ. առանց տոկոսների
- 1 Կափարիչի ծավալը կազմում է /1,2x1,2x0,25/=0,36m3
- 35 Կափարչի ծավալը կազմում է 036m3x35=12.6m3
- 35 դիտահորի ե/բ օղակների ծավալը կազմում է 3,14x2x0,12x35=21,98m3
- 35 դիտահորի ե/բ հատակի սալի ծավալը կազմում է /1,2x1,2x0,12x35/-6,048m3

- 35 դիտահորի հատակի բետոնյա առվակի ծավալը կազմում է 3,14x2x0,2x35/:4-5,5m3

Ե/բ կոնստրուկցիաների ընդհանուր ծավալը կազմում է 46,138 m3, նախահաշվում տրված է 30,85m3: Այսինքն Ե/բ կափարիչների ծավալն ընդգրկված չէ, որի գումարը կազմում է 35x66,67x1,133x1,11x1,2-3521,540 հազ. դրամ:

16-րդ կետում տրված է գործող դիտահորի կափարիչի տեղադրում, բայց չի տրված ապամոնտաժման ու թափոնատեղ տեղափոխման աշխատանքները: Բացի այդ, հնարավոր է որ գործող դիտահորը բացելուց հետո այն աստիճան քայքայված լինի, որ հետագա շահագործումը դառնա անհնար: Դրա համար էլ, մինչ նախագծելն, անհրաժեշտ էր բացել ու ուսումնասիրել վերականգնվող դիտահորը:

18-րդ կետում գրված է «պողպատե պատյանի տեղադրում դիտահորերում D=300մմ, L=0,17 մ, 71 հատ..,» բայց չի նշված ինչպես պատյանը պետք է ամրացվի քանդված պատերին, չկա ոչ մի նյութի ծավալ, նույն է պատյանի և խողովակի խծուծման աշխատանքների ծավալը:

19-րդ կետում գրված է «Թուջե մտոց- 35 հատ», որը նշանակում է թուջե օղակ, թուջե կափարիչով: Իսկ տեղադրման և բետոնյա 37 հատ ծածկասալ կափարիչի մասին նշում չկա, նշում չկա նաև դիտահորերի հատակների ե/բ սալերի վերաբերյալ: Վերոհիշյալ ե/բ կոնստրուկցիաների 1 խորանարդի գինը շատ տարբեր է:

2. Կենտրոնական մասնաշենքի ներքին կոյուղու ցանց բաժնում.

14-րդ կետում տրված է «Պոլիէթիլենային ծալքավոր խողովակների տեղադրում Φ100մմ, սեղմիչ օղակներով փորձարկումով,» բայց ներքին կոյուղու ցանցում ծալքավոր խողովակներ չի կիրառվում և չի արտադրվում:

20-րդ կետում տրված է միայն թուջե փականի մակնիշն ու արժեքը, առանց էլեկտրո շարժիչի արժեքի ու մակնիշի: Ըստ օնլայն տեղեկագրի ամենաէժան շարժիչի արժեքը կազմում է 46609 ռուբլի: Ինչը ներառված չէ նախահաշվում:

Այդ սիստեմի աշխատելու տեխնոլոգիան որոշակի չէ, որի իրագործումն ու շահագործումը նմանատիպ հիմնարկում անհնար է:

3. N6 մասնաշենքի ներքին կոյուղու ցանց բաժնում.

4-րդ կետում տրված է՝ պողպատե ձևավոր մասերի տեղադրում D 100մմ, բայց որտեղ և ինչի համար, պարզ չէ.

5-րդ կետում տրված է՝ պողպատե պատյանի տեղադրում D=300մմ, L=0,6մմ և ծածկերում անցքերի բացում D=100մմ, իսկ փակման մասին նշում չկա: Նույն 4. Ճաշարանի մասնաշենքի ներքին կոյուղու ցանց բաժնի 14-15-րդում: 15-րդ կետում տրված է d=100մմ կոյուղու թուջե խողովակաշարի ապամոնտաժում, բայց որտեղ և ինչի համար, պարզ չէ:

Պարզ չէ գործող գծերին միացումների մեթոդը և բնութագիրը:

Ընկերության համար անորոշ է, թե ինչ ձևով վերին հարկերի խցերի կոյուղին պետք է անջատվի և հարմարեցվի նոր կառուցվող կոյուղացանցին:

Ընկերության գեոդեզիստի հետ նշահարումներ կատարելիս պարզվել է, որ նախագծային նշահարումները չեն համապատասխանում փաստացիին:

Այսինքն այս ամենը հետևանք է առանց տեղանքի ու հիմնարկի կոյուղագծերի շահագործման ուսումնասիրության նախագծում կատարելը և նախագծերի անփույթ փորձաքննություն անցկացնելը:

Ելնելով վերոհիշյալ նկատառումներից՝ Ընկերությունը խնդրել է Պատվիրատուի հանձնարարությունը համապատասխան մասնագետներին իրականացնել նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ճշգրտումներ և պայմանագրում կատարել ծավալների ու գումարների համապատասխան փոփոխություններ, միաժամանակ նշելով աշխատանքների ավարտման նոր խելամիտ ժամկետ, քանի որ նախագծում տրված աշխատանքային գրաֆիկը աշխատանքներին ադեկվատ չէ:

Նմանատիպ բովանդակությամբ գրությամբ Ընկերությունը Պատվիրատուին դիմել է նաև 26.07.2018թ (ԱԳՇ-ՔԿՎ-06):

Ընկերության վերոհիշյալ գրության հիման վրա «Հ. Արամյան» ՍՊԸ-ի կողմից տրվել է համապատասխան դիտողություններ, որով համապատասխան անդրադարձ է կատարվել Ընկերության կողմից բարձրաձայնված հարցերին և մասնավորապես արձանագրվել, որ տեղանքը և հիմնարկի կոյուղու համակարգը մանրամասն ուսումնասիրված են և նոր կատարված է աշխատանքային նախագիծը, որն անցել է օրենքով սահմանված կարգով փորձաքննություն: Նախագծով տրված ժամակացույցը նախատեսված է շինարարական

նորմաներին համապատասխան: Նույն գրությամբ «Հ. Արամյան» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Ընկերության կողմից վկայակոչված խնդիրները հետևանք են նախագծից շեղվելու:

Նշված գրությունը Պատվիրատուն Ընկերությանը ուղարկել է 31.07.2018թ. թիվ 40/6-3912 գրությամբ:

Պատվիրատուին ուղղված 10.07.2018թ. թիվ ԱԳՇ-ՔԿՎ-05 գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ կատարվող աշխատանքների բարդությունից ու մեծ աշխատատարությունից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով եղանակային շոգ պայմանները (տարածքում ջերմաստիճանը շատ բարձր է նորմային, առավել ևս շատ բարձ է ուլտրամանուշակագույն ճառագայթների բացասական ազդեցությունը մարդկանց առողջական վիճակի վրա, որի հետևանքով վարպետ բանվորների մոտ առաջացել են տարատեսակ արևայրուքներ պարանոցի, ոտքերի, ձեռքերի ու գոտկատեղի շրջանում, որոնք խիստ ազդում են նրանց առողջության վրա և որը միաժամանակ խոչընդոտում է աշխատանքների իրականացմանը) խնդրել է Պատվիրատուի համաձայնությունը անորոշ ժամանակով դադարեցնել աշխատանքների ընթացքը, մինչև եղանակների կանոնավորումը, ինչպես նաև հնարավոր բարվոք օրերին թույլ տալ աշխատանքներն իրականացնել առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 9-ը, իսկ հանգստյան օրերին՝ ժամը 9:00-19:00-ն:

Ընկերությանն ուղղված 12.07.2018թ. թիվ 40/6-3424 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են խախտումներով.

Մասնավորապես՝

1. Խրամուղիներում ավազի նախապատրաստման շերտն իրականացվում է առկա ջրի պայմաններում,
2. Խողովակաշարի մոնտաժումն իրականացվում է առանց գեոդեզիական գործիքի.
3. Նախատեսված գույքային վահաններով խրամուղու պատերի ամրացումը չի իրականացվում.
4. Շինարարական աշխատանքներն իրականացվում են դանդաղ.
5. Շինարարական աշխատանքներին չեն մասնակցում «Արգոհշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնման հայտի հավելված 5.2-ով նշված մասնագետները.

6. Շինարարական աշխատանքներն իրականացվում են այլ անձանց միջոցով (ցուցակը կցվում է).
7. Նշված անձինք շինհրապարակ են ներկայանում անկանոն գրաֆիկով (հաճախումների հաշվառման ժամանակացույցը կցվում է)

Նույն գրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը «Արգոհշին» ՍՊԸ-ին խնդրել է ձեռնարկել գործուն միջոցներ՝ Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

ՀՀ քրեատարողական ծառայությանն ուղղված 25.07.2018թ. թիվ 215 գրությամբ «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն, որպես ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը իրականացնող կազմակերպություն, հայտնել է, որ Ընկերությունը շին-մոնտաժային աշխատանքներն իրականացնում է նախագծային շեղումներով, մասնավորապես.

1. Չի իրականացվում գույքային վահանակներով խրամուղու պատերի ամրացումը.
2. Կոյուղու դիտահոր 15-ից մինչև գործող կոյուղու դիտահորը խողովակը մոնտաժված է կորաձև L= 39մ.
3. Խրամուղու քանդման ընթացքում վնասվել է գործող կոյուղագիծը, որի պատճառով խրամուղին լցված է մոտ 40-50սմ կեղտաջրերով, առանց որի հեռացման հնարավոր չէ կոյուղագծի մոնտաժման աշխատանքներն իրականացնելը.
4. 14,15,24,25 և 7 կոյուղու դիտահորերի ե/բ հավաքովի էլեմենտները մոնտաժվել են առանց մետաղական մասերի ամրացման.

Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված 540գծմ արտաքին կոյուղագծից 25.07.2018թ. դրությամբ մոնտաժված է 125գծմ: Նման տեմպերով աշխատանքներ իրականացնելու դեպքում կազմակերպության դիտարկումներով պայմանագրով նախատեսված 31.08.2018թ. շին-մոնտաժային աշխատանքների ավարտն իրատեսական չէ:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում իրականացվող շինարարական աշխատանքների կատարման որակը և ընթացքը ստուգելու նպատակով ՀՀ ԱՆ քերակատարողական ծառայության պետի 03.08.2018. թիվ 113-Լ հրամանով

ստեղծված հանձնաժողովի կողմից 06.08.2018թ. Պայմանագրով նախատեսված աշխատանքների ընթացքի վերաբերյալ կազմվել է արձանագրություն, որով արձանագրվել է, որ կառուցված բոլոր դիտահորերը չեն համապատասխանում նախագծին, մոնտաժված խողովակաշարը պետք է ապամոնտաժվի նախագծին համապատասխան նորից կառուցվի:

Նույն արձանագրության համաձայն՝ «Արգոհշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չի համաձայնել հանձնաողովի անդամների արտահայտած դիրքորոշման հետ՝ համարելով դրանք անհիմն:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովի կողմից «Արգոհշին» ՍՊԸ-ին առաջարկվել է շին մոնտաժային աշխատանքները շարունակել թերությունները վերացնելուց հետո: Ընկերության ներկայացուցիչը թերությունները վերացնելու համար խնդրեց 20 օր ժամկետ:

Ընկերության կողմից Պատվիրատուին ուղղված 27.08.2018թ. թիվ ԱԳՇ-ՔԿՎ-12 գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ նախագիծը չունի փորձաքննական եզրակացություն և իրականացված է 06.07.2009թ. եզրակացության հիման վրա, որն անընդունելի է, որտեղ և առաջարկվում է «մասնագիտացված լիցենզավորված կազմակերպության միջոցով իրականացնել հորատումներ՝ տեղանքի հիդրոլոգիական իրավիճակի ճշգրտման, ջրային հորիզոնների բացահայտման և դրենաժային համակարգի ապահովման համար»:

Նախագծի վրա ռեալ նշումներ չկան գոյություն ունեցող կոյուղագծերի ու այլ կոմմունիկացիաների գոյության վերաբերյալ, որի հետևանքով դեռևս ցանկապատից դուրս արտաքին կոյուղու խրամուղին քանդելու ժամանակ ի հայտ եկան խրամուղին հատող բազմաթիվ մալուխագծեր ու կոմմունիկացիաներ, քանդած խրամուղին անընդհատ լցվում ու ողողվում էր անհայտ ջրերի հոսքով, խոչընդոտելով ու երկարաձգելով աշխատանքների իրականացումը: Նույնն ի հայտ եկավ բակում խրամուղիներ քանդելուց: Բացի այդ խրամուղին նախագծային խորությամբ քանդելուց նաև բակային մասում, ընդերքային մասում ողողում են խրամուղիները և խոչընդոտում աշխատանքների իրականացմանը:

Նախագծում մեծ անհրաժեշտություն կա իրականացնելու փոփոխություններ՝ նշահարումների ավելորդ կոյուղահորերի, տվյալ հաստատությունում ոչ կիրառելի ու ոչ անհրաժեշտ էլեկտրափականների (որոնց մակնիշն ու գները /40 անգամ քիչ/ նախահաշվում և նախագծում սխալ են նշված) և խցերի ներսում իրականացվող աշխատանքների վերաբերյալ, ինչ աշխատանքային նախագծերը կիրառելի չեն, որոնք նախագծող կազմակերպությունը հրաժարվում է իրականացնել:

Ընկերությանն անհիմն պատճառներով ստիպում են մինչ այժմ առանց այդ էլ շատ դժվար պայմաններում իրականացված աշխատանքները քանդել և նորից սկսել: Եթե տեխ. Հսկողությունը և այլ անձինք այս պահին կասկածելով աշխատանքների ոչ ճիշտ իրականացմանը, ստիպում են այդ ահռելի աշխատանքը քանդել և հողին հավասարացնել, ապա թող ըստ կարգի ամեն օր տեղում հսկեին և քանդելու առիթ չէր լինի, թեկուզ և ստուգելու համար ըստ շին նորմերի կարելի է տեղային բացումով ստուգել ճշտությունը/ կցվում է քաղաքաշինության օրենքից տեխ. հսկողության վերաբերյալ հատված/:

Միաժամանակ անհայտ ուղղությամբ անցնող նախագծում չնշված վթարված կոյուղագծերը Ընկերության կողմից վերականգնելուց հետո քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները ամեն օր Ընկերության աշխատանքները վերջացնելուց հետո, վերականգնված կոյուղագծերը քանդում էին և կոյուղաջրերը բաց թողնում նոր քանդված խրամուղիներ և Ընկերությունը ամեն օր ստիպված էր լինում կազմակերպել արհտտսական ջրահեռացում, որպեսզի չորացվեն խրամուղիները և իրականացվի կոյուղու խողովակների մոնտաժում:

Ընկերությունն այս մասին տեղեկացրել և փաստացի ցույց են տվել և Վ. Մելքոնյանին և Ա. Խաչատրյանին:

Քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները պատճառաբանում են, որ կոյուղաջրերը չեն հոսում և հետ են լցվում բանտախցեր:

Այս պատճառները ստուգելու համար Ընկերությունը Նուբարաշեն ՔԿՀ-ի աշխատակիցների հետ ուսումնասիրել է գործող կոյուղու դիտահորերը և պարզվել է, որ բոլոր դիտահորերը լցված են տիղմով ու լիովին խցանված են: Այս մասին տեղեկացված

են ՔԿԾ-ի տնտեսական մասի և Նուբարաշեն ՔԿՀ-ի աշխատակիցները, որոնք և իրականացրել են գործող կոյուղագծերի ու կոյուղահորերի մաքրման աշխատանքները:

Նույն գրությամբ Ընկերությունը խնդրել է Պատվիրատուի հանձնարարությունը և առաջարկությունները ՔԿԾ-ի և վերահսկվող կազմակերպությունների համապատասխան անձանց, շինարարական կազմակերպության հետ վարվել և ստուգումներն ու չափագրումները իրականացնել ըստ կարգի և ոչ հատուկ դիտավորությամբ, վերանորոգման աշխատանքներին համապատասխան ընթացք տալու և սեղմ ժամկետներում ավարտելու պայմանով:

Պատվիրատուին ուղղված 27.08.2018թ. գրությամբ «Արգոհշին» ՍՊԸ-ն հայտնել է, որ ջրահեռացման ցանցերի կառուցման ընթացքում ի հայտ են եկել չնախատեսված աշխատանքներ, առանց որոնց կատարման անհնար է դարձել ապահովվելու շին. մոնտաժային աշխատանքների անխափան ընթացքը:

Ընկերության ղեկավարությունը լիարժեք պատկերացնում է կատարվող աշխատանքների լրջությունը և հակված է հաղթահարել առկա բոլոր դժվարությունները և օբյեկտը հանձնել շահագործման սահմանված պահանջներին համապատասխան:

Նույն գրությամբ Ընկերությունը խնդրել է Պայմանագրի ժամկետն երկացնել 30 օրացույցային օրով:

Կողմերի միջև 31.08.2018թ. կնքվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որով Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է 30 օրացույցային օրով և աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել մինչև 30.09.2018թ.:

Ընկերությանն ուղղված 16.10.2018թ. թիվ 40/6-5600 գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտված չեն, ուստի անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորում ուշացման վերաբերյալ և առաջարկել ողջամիտ ժամկետ աշխատանքներն ավարտելու համար, հակառակ դեպքում կկիրառվի Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանն ուղղված 04.12.2018թ. թիվ ԱԳՇ-ՔԿՎ-12 գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ արտաքին կոյուղագծերի կառուցման աշխատանքների և լրացուցիչ անհրաժեշտ աշխատանքների իրականացումն արդեն

մոտենում է ավարտին և ներքին կոյուղագծերի ելքերը միացված են նոր կառուցված կոյուղագծերին, որոնք երաշխիքորեն աշխատելու են անխափան:

Աշխատանքների վերջնական ավարտման համար առկա են հետևյալ խնդիրները.

1. Կոյուղագծերի մի մասը, մինչ օրս, ծածկված չեն, ինչն առատ տեղումների առկայության դեպքում բերելու է կոյուղագծերի ավազային ծածկույթի խաթարման և նոր կառուցված կոյուղագծերի վթարման: Անհրաժեշտ է խրամուղիների շուտափույթ հետլիցք:

2. Անհրաժեշտություն կա առկա նախագծա-նախահաշվային փաստաթղթերում իրականացնել փոփոխություններ, տալ լրացուցիչ աշխատանքների համար նոր գներ և կազմել համադրման ակտ, վերջնական վճարումներ կատարելու համար:

3. Ընկերության տեղեկություններով ՔԿԾ-ի կողմից պատվիրվել է ՔԿՀ-ի ներքին կոյուղացանցի վերակառուցման նոր նախագիծ, որի իրականացման ժամանակ անհրաժեշտորեն կխաթարվի առկա նախագծով կատարվելիք մասնակի աշխատանքները /իհարկե այդ մասին նախագիծը գործնականորեն կիառելի չէ/ ինչի պատճառով Ընկերությունն անհրաժեշտ չի համարում գումար վատնել առկա նախագծով ներքին կոյուղացանցում մասնակի փոփոխությունների իրականացման վրա:

Նույն գրությամբ՝ Ընկերությունը խնդրել է Պատվիրատուի հանձնարարությունը պատասխանատու աշխատակիցներին, տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության ներկայացուցիչներն Ընկերության մասնագետների հետ համատեղ քննարկել և նշված խնդիրներին շուտափույթ տալ համապատասխան անհրաժեշտ լուծումներ:

Ընկերությանն ուղղված 28.12.2018թ. թիվ 40/6-7309 գրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը հայտնել է, որ Ընկերությանն հնարավորություն է տրվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարել մինչև 2018թ. վերջը, սակայն Ընկերության կողմից մինչև տարեվերջ չեն ավարտվել շինարարական աշխատանքները՝ 33 000 000 ՀՀ դրամի փոխարեն, 27.12.2018թ. դրությամբ, կատարվել են 19 564 440 ՀՀ դրամի աշխատանքներ, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4. կետը և 3.1.4 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 27.12.2018թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

Այսպիսով՝ Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Արգոհշին» ՍՊԸ-ի միջև 24.05.2018թ. կնքված կապալային աշխատանքների կատարման «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագիրը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության համապատասխան գրությունները, Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների դիտողություններն, արձանագրում եմ, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են եկել խոչընդոտներ, որոնք կապված էին հավելյալ աշխատանքների իրականացման հետ, որոնց վերաբերյալ Ընկերությունը բազմիցս տեղեկացրել է Պատվիրատուին և առաջարկել նախագծի և պայմանագրի նախահաշվի մեջ կատարել համապատասխան փոփոխություններ: Միևնույն ժամանակ գործի նյութերում առկա է Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ հեղինակային

հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից տրամադրված դիտողությունները, որոնց համաձայն նախագիծը կազմել և փորձաքննություն է անցել օրենքով սահմանված կարգով, իսկ առաջացած խոչընդոտները հետևանք են նախագծից Ընկերությանը շեղվելու: Դրա հետ մեկտեղ Պայմանագրով նախատեսված աշխատանքների հետագա իրականացման ընթացքում Ընկերությունը ևս բարձրաձայնել է խնդիրներ, որոնք ի հայտ են եկել աշխատանքների կատարման ընթացքում, կապված ստորգետնյա կոմմունիկացիաների, ջրերի և այլ հանգամանքների հետ, որոնց հետևանքով Ընկերության կողմից նույն աշխատանքները կատարվել են մի քանի անգամ: Ադյունքում, չնայած այն հանգամանքին, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետներն երկարաձգվել են և Ընկերությանը հնարավորություն է տրվել մինչև 2018թ. վերջն իրականացնել աշխատանքները, այնուամենայնիվ Ընկերությունը 27.12.2018թ. դրությամբ իրականացրել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների մոտ 65 տոկոսը:

Դրա հետ մեկտեղ, այնուամենայնիվ, չնայած այն հանգամանքին, որ Ընկերությունը փաստացի ամբողջությամբ չի իրականացրել Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու պարտականությունը, այնուամենայնիվ, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անհրաժեշտ է համարում հաշվի առնել այն խոչընդոտները և հավելյալ աշխատանքներ կատարելու հանգամանքը, որոնք ի հայտ են եկել աշխատանքների իրականացման ընթացքում և լրացուցիչ խոչընդոտներ ստեղծել աշխատանքները ժամանակին ավարտելու համար: Ընդ որում, ուսումնասիրելով գործում առկա նյութերը, գտնում եմ, որ «Արգոհշին» ՍՊԸ-ի կողմից աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած և վերը նշված գրություններում բարձրաձայնված խնդիրների ծագման պատճառներն այնուամենայնիվ բավարար հիմնավորված չեն կարող համարվել և ամբողջովին հաստատել Ընկերության մեղավորությունը Պայմանագրով նախատեսված աշխատանքները ժամանակին չկատարելու հարցում: Նման պայմաններում, հաշվի առնելով նաև Ընկերության վարքագիծը, գտնում եմ, որ բավարար հիմքեր առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/394-19 գրությամբ «Արգոհշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**